ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԼԱՍՏԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Ոսկանյան Ա.Ե., Հովհաննիսյան Մ.Է.*

Ամփոփում: Մշակվել է ՀՀ Կոտայքի մարզի օրգանական գյուղատնտեսական կլաստերի կառուցվածքային մոդել: Մոդելում նախատեսվում է համագործակցություն պետական կառույցների, գիտակրթական հաստատությունների, Էկոգլոբ ՍՊԸ-ի, Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնի (CARD), լիզինգային ընկերությունների (ACBA Leasing, Agrocredit), Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) տեղական կառույցի, «ՕՌՎԱԿՕ» ՓԲԸ օրգանական պարարտանյութեր արտադրողի և այլ շահագրգիռ մասնակիցների միջև: Մարզում կլաստերային քաղաքականություն իրականացնելու, փոքր և միջին ձեռնարկատիրությանն օժանդակող ենթակառուցվածքներ զարգացնելու համար նպատակահարմար կլինի ձևավորել կլաստերի զարգացման բաժին, որը կկատարի միջնորդի դեր շահագրգիռ կողմերի միջև, կներկայացնի ֆինանսական օժանդակություններ ստանալու առաջարկություններ, կհամակարգի օրգանական գյուղատնտեսական կլաստերի զարգացման նախագծի իրականացման գործընթացը: Կոտայքի մարզում օրգանական գյուղատնտեսական կլաստերային համակարգի ձևավորման և գործարկման ծրագրի նախաձեռնումն ու իրականացումը կնպաստեն օրգանական գյուղատնտեսական մթերքի արտադրության ծավալների ավելացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը և բիզնես մրցունակության ապահովմանը:

Բանալի բառեր. կլաստեր, օրգանական գյուղատնտեսություն, պետական աջակցություն, մրցունակություն, պարենային անվտանգություն

Jel classification: E27, L11, O13, Q13, Q13, R58

1. Ներածություն

Օրգանական գյուղատնտեսությունը ճյուղի առանձնահատուկ վարման համակարգ է, նպաստում է արտադրության ընդլայնմանն ու

* Ոսկանյան Աշոտ Երջանիկի, ՀԱԱՀ ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., դոցենտ ashot.voskan@gmail.com, Հովհաննիսյան Մարիաննա Էդուարդի, ՀԱԱՀ ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնի դասախոս, տ.գ.թ. marianna_hovhannisian@mail.ru,

խրախուսմանը, որում հողի բարելավումը դիտարկվում է որպես հիմնական առանցք՝ որակյալ, էկոլոգիապես մաքուր սննդամթերքի արտադրության գործում: Օրգանական գյուղատնտեսությունը լայն տարածում է ստացել ամբողջ աշխարհում, որի զարգացման միջազգային դաշնությունը IFOAM (**International Federation of Organic Agriculture Movement**), գործելով աշխարհի ավելի քան 100 երկրներում, նպաստում և աջակցում է օրգանական գյուղատնտեսության զարգացմանը[1]:

Օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում զարգացման մեծ ներուժ ունի: Այս առումով ուսումնասիրությունը կատարել ենք Կոտայքի մարզի օրինակով՝ հիմք ընդունելով նաև այն հանգամանքը, որ մարզի զարգացման ռազմավարական հիմնական գերակայություններից է գյուղատնտեսության ոլորտի արդիականացում և զարգացումը՝ օրգանական գյուղատնտեսական մթերքների արտադրություն[2]:

2. Վերլուծական մաս

Մարզում գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 154 584.3 հա, որից՝ վարելահողեր՝ 37708.6 հա (մշակվում է 19351.2 հեկտարը կամ 51.3%-ը): Զարգացած են հիմնականում անասնապահությունը և բուսաբուծությունը: Մարզում գործում են 32660 ընտանեկան (գյուղացիական) տնտեսություններ, գյուղատնտեսական մթերքներ վերամշակող 30 կազմակերպություններ: Մարզում մշակվում են հիմնականում հացահատիկային մշակաբույսեր, բանջարեղեն, կարտոֆիլ, պտուղ, խաղող: Գործում են 10 ջերմոցային տնտեսություններ՝ 61.0 հա տարածքով (որից՝ ժամանակակից տեխնոլոգիաներով՝ 52.6 հա): Հայաստանի Հանրապետության և Կոտայքի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի ցուցանիշներն ամփոփված է աղյուսակ 1-ում[3]:

---

1 Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության նախկին կայքէջ, Օրգանական գյուղատնտեսություն | old minagro.am

2 ՀՀ Կոտայքի մարզի 2017-2025 թթ., զարգացման ռազմավարություն, Հրազդան 2017, էջ 53

3 armstat.am ազգային վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջ, ՀՀ Կոտայքի մարզը թվերով, 2020, էջ 26,

Աղյուսակ 1. Հայաստանի Հանրապետության և Կոտայքի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը ընթացիկ գներով, մլրդ դրամ

	Գյուղատնտեսության համախառն արտադրանքը	2015	2016	2017	2018	2019
Հայաստանի Հանրապետություն	ընդամենը	945.4	878.5	908.6	892.9	853.3
	բուսաբուծություն	550	486.7	469.3	415.8	410.9
	անասնաբուծություն	395.4	391.8	439.3	477.1	442.4
Կոտայք	ընդամենը	61.5	60.4	73.4	72.9	70.6
	բուսաբուծություն	21.3	19.6	27.6	21.3	20.2
	անասնաբուծություն	40.2	40.8	45.8	51.6	50.4

Աղյուսակի վերլուծությունից պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում Կոտայքի մարզի տեսակարար կշիռը 2019 թ. կազմել է 8,3 %: ՀՀ Կոտայքի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը ներկայացված է գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1. ՀՀ Կոտայքի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը (ընթացիկ գներով, մլրդ դրամ)

Ըստ գծապատկեր 1-ի՝ անասնաբուծության համախառն արտադրանքը 2019 թ. 2,5 անգամ գերազանցում է բուսաբուծության համախառն արտադրանքին:

ՀՀ Կոտայքի մարզում առկա է 37708 հա վարելահող, որից տարեկան օգտագործվում է 40-50%-ը: Վարելահողերի չօգտագործման

հիմնական պատճառներն են՝ բնակավայրերից հեռու գտնվելը, քարքարոտությունը, ինչպես նաև ոռոգման համակարգի հետ կապված դժվարությունները: Մարզում 18815 հա ոռոգելի վարելահողերից 2020թ. ոռոգվել է 7652 հա:

Մարզում ընտանեկան (գյուղացիական) տնտեսությունները մասնատված են (0.06 հա-ից մինչև 3.0 հա), ինչի հետևանքով ցածր է արտադրության արդյունավետությունը, հնարավոր չէ կիրառել անհրաժեշտ ցանքաշրջանառություն և արտադրության նոր տեխնոլոգիաներ, դժվարություններ են ծագում գյուղատնտեսական արտադրության սպասարկումների, արտադրանքի իրացման և այլ բնագավառներում: Կոտայքի մարզի ագրարային ոլորտի SWOT վերլուծությունն ամփոփված է աղյուսակ 2-ում:

SWOT վերլուծության արդյունքում բացահայտված խնդիրները հաղթահարելու նպատակով անհրաժեշտ է արդյունավետ համագործակցություն ֆերմերային տնտեսությունների, վերամշակողների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, գիտակրթական հաստատությունների և այլ շահագրգիռ կողմերի միջև:

ՀՀ կառավարության ծրագրում կարևորվում են գյուղատնտեսության արդյունավետության, պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը, արդի տեխնոլոգիաների ներդրումը, արտահանման ծավալների ավելացումը, գյուղատնտեսական ամբողջ արժեշղթայում ընդգրկված փոքր տնային տնտեսությունների, գյուղացիական կոոպերատիվների, վերամշակողների և արտահանողների եկամտաբերության ավելացումը[4]: Գյուղատնտեսության արդյունավետ վարման նպատակով խնդիր է դրվում ստեղծել կրթական, գիտահետազոտական, արդյունաբերական կլաստերներ և խթանել համագործակցությունը:

---

[4] 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ ընդունված ՀՀ կառավարության ծրագիր. www.gov.am

Աղյուսակ 2. Կոտայքի մարզի ագրարային ոլորտի SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
• Ջրային ռեսուրսների մեծ պաշարների առկայություն (հանքային և քաղցրահամ): • Մարզը գտնվում է հանրապետության կենտրոնական մասում: • Մարզի համայնքների 92.5%-ը գազաֆիկացված է: • Համայնքների 90%-ը ապահովված է ջրամատակարարմամբ: • Մարզային ճանապարհների 37.7%-ը լավ վիճակում է, 26.9 %-ը՝ բավարար: • Աշխատունակ տարիքի բնակչության մեծ տեսակարար կշիռ, տնտեսապես ակտիվ բնակչության բարձր մակարդակ:	• Մարզային ճանապարհների 35.4%-ը գտնվում է ոչ բարվոք վիճակում: • Համայնքների 45%-ը ապահովված չէ շուրջօրյա ջրամատակարարմամբ: • Ներքին և արտաքին սպառման շուկաների սահմանափակություն: • Գործազրկության բարձր մակարդակ՝ 23 %, • Համայնքների խոշորացման ծրագիրը չի գործարկվել: • Մարզում առկա հակակարկտային կայանները (27 հատ) բավարար չեն ցանքատարածությունները կարկըտահարությունից պաշտպանելու համար: • Տնտեսվարողների, պետական կառավարման մարմինների և այլ սուբյեկտների ոչ արդյունավետ համագործակցություն: • Գազաֆիկացված չեն մարզի 4 բնակավայրերը՝ Հանքավան, Ողջաբերդ, Բուժական, Սարալանջ:
Հնարավորություններ	**Սպառնալիքներ**
• Գյուղատնտեսական նշանակության հողերի մշակության համար նպաստավոր բնակլիմայական պայմանների առկայություն: • Չօգտագործվող արտադրական տարածքների վերագործարկում, • Բնակլիմայական լավ պայմաններ ագրոզբոսաշրջության տարբեր ձևերի զարգացում: • Մարզում տարվա ընթացքում արևային օրերի և ժամերի մեծ քանակ: • Նոր արտադրություններ հիմնելու համար արտադրական մասնաշենքերի, ինժեներական կառույցների և ինժեներական որակյալ կադրերի առկայություն: • Առևտրային և արտադրական ներդրումներ մարզի գրավիչ տարածքներում՝ Երևանին մոտ գտնվելու շնորհիվ: • Առկա պոտենցիալ օրգանական գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար:	• Բնակլիմայական ռիսկեր գյուղատնտեսության ոլորտում՝ կարկտահարություն, ուժեղ քամիներ, ցրտահարություն, երաշտ: • Սողանքների առկայություն, սեյսմիկ ռիսկեր • Ենթակառուցվածքներում ներդրումների և ֆինանսական միջոցների անբավարարություն: • Գյուղական համայնքների սահմանափակ ֆինանսական հնարավորություններ:

Նշում. Աղյուսակը կազմված է սեփական ուսումնասիրությունների և ՀՀ Կոտայքի մարզի 2017-2025 թթ. զարգացման ռազմավարության հիման վրա

Միջազգային փորձը վկայում է, որ վերջին երկու տասնամյակում կլաստերների ձևավորման գործընթացը տեղի է ունենում բավականին ակտիվ: Համաձայն փորձագիտական գնահատականների, ներկայումս կլաստերիզացիան ընդգրկում է առաջատար երկրների տնտեսությունների 50 տոկոսը: ԱՄՆ-ում կլաստերների քանակը հասնում է 380-ի, որոնցում ընդգրկված են կազմակերպությունների կեսից ավելին և ապահովվում են ՀՆԱ-ի 60 տոկոսից ավելին: Եվրամիության երկրներում կլաստերներում զբաղված է աշխատուժի 38 տոկոսը[5]:

Եվրամիության երկրներում կլաստերների աջակցության ծրագրերն իրականացվում են տարածքային, գիտության և տեխնոլոգիաների զարգացման, ինչպես նաև արդյունաբերական քաղաքականության իրականացման շրջանակներում: Այսպիսի ծրագրերի նախաձեռնումը խոսում է այն մասին, որ կլաստերները ԵՄ-ում տարածքային, գիտական և արդյունաբերական զարգացման հիմնական գերակայություններից են: ԵՄ-ում կլաստերների 1/3-ի նախաձեռնողը պետությունն է (ֆինանսավորում է կլաստերային նախաձեռնությունների 54%-ը), 27%-ը՝ մասնավոր հատվածը (ֆինանսավորման 18%-ը), իսկ 35%-ի դեպքում կլաստերները ստեղծվում են պետության և գործարար ոլորտի համատեղ նախաձեռնության արդյունքում (ֆինանսավորման 35%-ը) [6]:

Օրգանական կլաստերը ստեղծվում է ՀՀ տարածքում պարենային անվտանգության ապահովման, էկոլոգիապես մաքուր սննդամթերքի արտադրության, ագրարային ոլորտում նորարարական տեխնոլոգիաների մշակման և ներդրման, գիտատեխնիկական և արտադրական կոոպերացիայի ապահովման, կլաստերի մասնակիցների գործունեության կոորդինացման և ֆերմերային տնտեսությունների մրցունակության բարձրացման նպատակով:

Մեր կարծիքով ՀՀ Կոտայքի մարզում առկա են նպաստավոր բնակլիմայական, ռեսուրսային և ներուժային պայմաններ կլաստերային մոտեցումների կիրառմամբ զարգացնելու օրգանական գյուղատնտեսության ոլորտը: Օրգանական գյուղատնտեսական կլաստերի մոդելը ՀՀ Կոտայքի մարզում կարող է ունենալ հետևյալ տեսքը (գծապատկեր 1):

---

5 Инновационно-технологические кластеры стран – членов международного центра научной и технической информации 2013 г. , стр 19 Инновационно-технологические кластеры (icsti.su)

6 OECD, Competitive Regional Clusters: National Policy Approaches, 2007 URL: http://www.oecd.org/cfe/regional-policy/ competitive regional clustersnational policy approaches.htm

Գծապատկեր 1. Օրգանական գյուղատնտեսական կլաստերների կառուցվածքային մոդել ՀՀ Կոտայքի մարզում



Նշում. Կազմված է հեղինակների կողմից

Մոդելում նախատեսվել է համագործակցություն պետական կառույցների, գիտակրթական հաստատությունների, Էկոգլոբ ՍՊԸ-ի, Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնի (CARD), լիզինգային ընկերությունների (ACBA Leasing, Agrocredit), Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) տեղական կառույցի, «ՕՌՎԱԿՕ» ՓԲԸ օրգանական պարարտանյութեր արտադրողի, Կանաչ արահետ, Կանայք հանուն առողջության հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ մասնակիցների միջև: Էկոգլոբ ՍՊԸ-ն միջազգային ճանաչում ունեցող օրգանական գյուղատնտեսության և սննդամթերքի արտադրության սերտիֆիկացման մարմին է, որն իրականացնում է օրգանական սերտիֆիկացում հողի, բուսական և կենդանական արտադրության մթերքների, ինչպես նաև վայրի պտուղների հավաքի, մեղվապահության ու գինու ոլորտներում տարբեր շուկաների համար՝ ՀՀ, ԵՄ, Շվեյցարիա, ԱՄՆ և Կանադա: Ներկայումս Կոտայքի մարզում առկա են օրգանական գյուղատնտեսությամբ մասնագիտացված 7 արտադրողներ, որից 3-ը բուսաբուծական արտադրությամբ են մասնագիտացված՝ «Նաիրիան» ՓԲԸ, «Վահրամ Ղազարյան», «Գոհար Մովսիսյան» ֆերմերային տնտեսությունները, 3-ը մասնագիտացված

են մեղվապահության ուղղությամբ՝ «Անուշակ» ՓԲԸ, «Վարդան Քոչարյան» և «Սամվել Ավագյան» ֆերմերային տնտեսություններ և 1 վերամշակող կազմակերպություն՝ «Ալպիա» ՍՊԸ[7]: Օրգանական գյուղատնտեսական կլաստերի հիմնական գործառույթներն են.

- օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվողների շրջանակի ընդլայնում,
- կլաստերում ընդգրկված օղակների, համակարգային կառավարելիության աստիճանի բարձրացում,
- արտադրված արտադրանքի առաջխաղացմանը նպաստելը,
- օրգանական գյուղատնտեսական մթերքների բրենդի ձևավորումը,
- ինովացիոն տեխնոլոգիաների ներդրումն ու ցուցադրությունը, համապատասխան խորհրդատվության կազմակերպում:

Կլաստերային նախաձեռնություն իրականացնող սուբյեկտների միջև արդյունավետ համագործակցության նպատակով անհրաժեշտ է մշակել կլաստերի գործարկման ճանապարհային քարտեզ, համագործակցության համաձայնագրի ձև և զարգացման ծրագիր:

Արդյունավետ համագործակցության և ֆերմերների վերապատրաստման արդյունքում հնարավորություն կստեղծվի Կոտայքի մարզում ավելացնել օրգանական գյուղատնտեսությամբ մասնագիտացված ֆերմերային տնտեսությունների և վերամշակողների քանակը:

Ինտենսիվ այգիների հիմնում ժամանակակից տեխնոլոգիաներով (հակակարկտային ցանց, ոռոգման կաթիլային եղանակ, տնկիների խնամքի ու մշակության նոր մեթոդների ներդնում), ինչպես նաև տնկանյութի արտադրությամբ զբաղվող կենտրոնի հիմնում, որի համար բազա կարող է ծառայել Նոր Գեղի համայնքում գտնվող նախկին տնկարանային տնտեսությունը:

Բարձրորակ տնկանյութի և սերմանյութի օգտագործման, ագրոտեխնիկական պահանջների կատարման, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների տոհմային հատկանիշների բարելավման միջոցով անհրաժեշտ է բարձրացնել ինչպես մշակաբույսերի բերքատվությունը, այնպես էլ կենդանիների մթերատվությունը՝ արդյունքում բարձրացնելով արտադրության արդյունավետությունը:

[7] www.ecoglobe.com միջազգային սերտիֆիկացնող և հսկող մարմին, պաշտոնական կայքէջ:

3. Եզրակացություն

ՀՀ Կոտայքի մարզում կլաստերային քաղաքականություն իրականացնելու, փոքր և միջին ձեռնարկատիրությանն օժանդակող ենթակառուցվածքներ զարգացնելու համար նպատակահարմար կլինի մարզպետարանի կառուցվածքում գործող գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունում ձևավորել կլաստերի զարգացման բաժին, որը կկատարի միջնորդի դեր շահագրգիռ կողմերի միջև, կներկայացնի առաջարկություններ ֆինանսական օժանդակություն ստանալու, կհամակարգի օրգանական գյուղատնտեսական կլաստերի զարգացման նախագծի իրականացման գործընթացը:

Կլաստերի զարգացման ծրագրով կնախատեսվի վարելահողերի արդյունավետ օգտագործում, չօգտագործվող արտադրական տարածքների վերագործարկում, նոր արտադրական կարողությունների ստեղծում, փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության զարգացում:

Օրգանական գյուղատնտեսական կլաստերի ստեղծման և զարգացման նպատակով Հայաստանի ազգային ագրարային համալսարանում հնարավոր է անցկացնել ֆերմերների և այլ շահագրգիռ մասնակիցների վերապատրաստման դասընթացներ: Վերապատրաստման դասընթացները կընդգրկեն.

1. անձնակազմի վերապատրաստում և խորացված ուսուցման կազմակերպում,
2. կլաստերի անդամների շահերից բխող խորհրդատվական ծառայությունների մատուցում,
3. օրգանական գյուղատնտեսական կլաստերի զարգացման և ներդրումային ծրագրերի, նախագծերի մշակում,
4. կլաստերի անդամների հետաքրքրությունների ոլորտում համաժողովների, սեմինարների, վեբինարների կազմակերպում,
5. կլաստերի անդամներին մեթոդական, կազմակերպչական, փորձագիտական-վերլուծական և տեղեկատվական աջակցություն:

Կոտայքի մարզում օրգանական գյուղատնտեսական կլաստերային համակարգի ձևավորման և գործարկման ծրագրի նախաձեռնումն ու իրականացումը կնպաստի օրգանական գյուղատնտեսական մթերքի արտադրության ծավալների ավելացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը և բիզնես մրցունակության ապահովմանը: Օրգանական գյուղատնտեսական կլաստերի հեռանկարային զարգացման մեր պատկերացումներն ամփոփված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Օրգանական գյուղատնտեսական կլաստերի ձևավորման հեռանկարային ցուցանիշները

	Ցուցանիշներ	2024	2025	2026	2027	2028
1.	Կլաստերում ընդգրկված ֆերմերային տնտեսությունների, կոոպերատիվների, փոքր և միջին կազմակերպությունների քանակը (կազմ.)	11	15	20	26	33
2.	Հավելաճի տեմպը, կլաստերում ընդգրկված ֆերմերային տնտեսությունների, փոքր և միջին ընկերությունների, (%)	X	36,4	33,3	30	26,9
3.	Համագործակցության արդյունքում ստեղծված նոր աշխատատեղերի քանակը	9	15	26	45	70
4.	Հավելաճի տեմպը, նոր ստեղծված աշխատատեղերի, (%)	X	66,6	73,3	73,1	55,5
5.	Համատեղ իրականացրած նախագծերի քանակը (նախագիծ)	2	4	7	11	16
6.	Հավելաճի տեմպը, համատեղ իրականացրած նախագծերի, (%)	X	100	75	57,1	45,5
7.	Ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի մշակություն	1	2	3	4	4

Նշում. Աղյուսակը կազմված է սեփական ուսումնասիրությունների հիման վրա

Աղյուսակի վերլուծությունից պարզ է դառնում, որ կլաստերի անդամների համագործակցության արդյունքում նախադրյալներ կստեղծվեն համատեղ նախաձեռնությունների և նախագծերի իրականացման, ոչ ավանդական, բարձրարժեք մշակաբույսերի մշակության, նոր աշխատատեղերի ստեղծման, նորարարական տեխնոլոգիաների ներդրման և ռիսկերի նվազեցման համար: Պարենային անվտանգության ապահովման տեսանկյունից այն սիներգետիկ ազդեցություն կգործի: Հայաստանի Հանրապետությունում ագրարային ոլորտում կլաստերային քաղաքականության իրականացման առաջին փուլում պետք է իրականացվեն հետևյալ միջոցառումները.

- ագրարային կլաստերների ձևավորման, հետագա զարգացման և մասնակիցների իրավահարաբերությունները կարգավորելու նպատակով նորմատիվ իրավական ակտերի մշակում, համապատասխան օրենքի ընդունում,
- ագրարային կլաստերների զարգացման ծրագրերի և ռազմավարությունների մշակում:

Գրականություն

1. 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ ընդունված ՀՀ կառավարության ծրագիր. www.gov.am
2. ՀՀ Կոտայքի մարզի 2017-2025 թթ. զարգացման ռազմավարություն, Հրազդան 2017, 65 էջ:
3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջ. www.mineconomy.am
4. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության նախկին կայքէջ Օրգանական գյուղատնտեսություն | old minagro.am
5. armstat.am ազգային վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջ, ՀՀ Կոտայքի մարզը թվերով, 2020, էջ 26, 102 էջ:
6. Инновационно-технологические кластеры стран – членов международного центра научной и технической информации 2013 г. ,- стр. 19 Инновационно-технологические кластеры (icsti.su)
7. OECD, Competitive Regional Clusters: National Policy Approaches, 2007 URL: http://www.oecd.org/cfe/regional-policy/ competitive regional clustersnational policy approaches.htm
8. www.ecoglobe.com միջազգային սերտիֆիկացնող և հսկող մարմին, պաշտոնական կայքէջ:

Ընդունված է 7.9.2021
Գրախոսված է 4.10.2021

ПОДХОДЫ ФОРМИРОВАНИЯ ОРГАНИЧЕСКОГО СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОГО КЛАСТЕРА В КОТАЙКСКОМ МАРЗЕ РА

Восканян А.Е., Ованнисян М.Э.

Аннотация. В статье разработана структурная модель органического сельскохозяйственного кластера в Котайкской области Республики Армения. Модель предусматривает сотрудничество между государственными структурами, научными и образовательными учреждениями, ООО «Экоглоб», Агробизнесом и Центром развития сельских территорий (CARD), лизинговыми компаниями (ACBA Leasing, Agrocredit), местной организацией Продовольствия Сельскохозяйственной организацией (FAO), производителем органической продукции «ORVACO» и другими заинтересованными сторонами. Для реализации кластерной политики развития инфраструктуры поддержки малого и среднего предпринимательства целесообразно в структуре марзпетарана сформировать отдел кластерного развития в департаменте сельского хозяйства и охраны природы, который выступит в качестве посредника между заинтересованными сторонами: будет предлагать финансовую поддержку, координировать реализацию проекта развития органического сельскохозяйственного кластера. Инициирование и реализация программы по созданию и функционированию кластерной системы органического сельского хозяйства в Котайкской области будет способствовать увеличению производства органической сельскохозяйственной продукции, созданию новых рабочих мест и обеспечению конкурентоспособности бизнеса.

Ключевые слова: кластер, органическое сельское хозяйство, государственная поддержка, конкурентоспособность, продовольственная безопасность

APPROACHES FOR FORMING AN ORGANIC AGRICULTURAL CLUSTER IN KOTAYK REGION RA

Voskanyan A.Y., Hovhannisyan M.E.

Abstract. The authors have developed a structural model of an organic agricultural cluster in the Kotayk region of the Republic of Armenia. The model provides for cooperation between government agencies, scientific and educational institutions, Ecoglob LLC, Agribusiness and the Center for Rural Development (CARD), leasing companies (ACBA Leasing, Agrocredit), the local Food Organization Agricultural Organization (FAO), organic producer ORVACO LLC and other interested parties. To implement the cluster policy in the Kotayk region of the Republic of Armenia, develop the infrastructure for supporting small and medium-sized businesses, it is advisable to form a cluster development department in the department of agriculture and nature protection in the structure of the marzpetaran, which will act as an intermediary: will submit proposals for receiving financial assistance, will coordinate the implementation of the organic agricultural cluster development project. Initiation and implementation of a program for the creation and operation of a cluster system of organic agriculture in the Kotayk region will help increase the production of organic agricultural products, create new jobs and ensure the competitiveness of business.

Key words: cluster, organic agriculture, government support, competitiveness, food security